

մէջ սակայն քան զամէնը պղծագոյն եւ ապականիչ, ու դժբախտաբար Հայուն մառանին կամ խոհանոցին ամենէն մերձաւոր դարանակալն էր մուկն, որ բոլորէն աւելի զբաղեցուցեր եւ յոգնեցուցեր է անոր միտքն ու զրիչը: Այս անասնիկը ճշմարիտ սարսափն էր մեր նախապաշարեալ հարց, մանաւանդ իւր սատակը: «Առաւել մահուամբ սպառնայ քան կենդանութեամբ», կ'ըսէ Ալաւկայ որդին, անոր մեծագոյն թշնամին. «վասն այնորիկ, կը յարէ, երկնչիմք առաւել ի մահուանէ նորա» (Բ): Հրէական օրէնքն անգամ այդքան ուժգին չէր դատապարտեր զայն (Ղեւտ. ԺԱ, 30-2): Այս պատերազմը մկան դէմ բաւական հին է մեր քով. Ս. Ներսեսի ընծայուած կանոնաց մէջ արդէն արգելուած է «մկնանկ գինի» ըմպել (Ներս. ԼԲ): Շնորհալին եւս կը յանդիմանէր Ասորիները՝ թէ «ընդէր զպղծեալ կերակուրսն մկամբք ուտէք անխտիր» (Րնդհ. 158): Եւ Մովսէս ու կիրակոս Եզնկացիք խորշելի կը դաւանին միշտ «զմկնընկէցն» (Մվ. Եզկ. Կր. Եզկ.):

Բայց անասնոյս խտրութիւններն աւելի մանր կը թուէ Ալաւկայ որդին, որոյ տեսութիւնըր յառաջ կը բերեմ համառօտիւ: — Եթէ անոր զիական աղի վրայ